ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 29. ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ, ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

1 Վրա հասավ անկայունության տևական մի ժամանակաշրջան: Հաճախակի դարձան ապստամբությունները բանակում: Ապստամբած զինվորները կայսր էին հռչակում իրենց զորավարներին՝ հուսալով, որ նոր կայսեր օրոք իրենց դրությունը կլավանա: III դարում գահակալեց ավելի քան 50 կայսր: Իրար հաջորդող կայսրերը չէին կարողանում կայունացնել դրությունը: Դրամական միջոցների կարիք զգալով՝ կայսրերը հաճախ կեղծում էին դրամը: Փողն արժեզրկվել էր: Մարդիկ ստիպված ավելի հաճախ էին դիմում պարզ ապրանքափոխանակության: Կայսրության տնտեսական և քաղաքական վիճակը գնալով ավելի էր վատթարանում:

2